իսկ եթե լծկան անասունները, գործիքները կամ սերմը տվել է հողատերը, երկու կողմերի մեջ պիտի համաձայնություն կայացվեր լրացուցիչ վարձատրության համար։ Տնային և դաշտային աշխատանքների համար հողատերն ամեն մի տասը ծխից պիտի ստանար մեկ մարդ մեկ տարի ժամանակով, ծխից մեկ-մեկ մարդուց ոչ ավելի, այն էլ իր հավատակիցներից և իր ընտրությամբ։ Այդ մարդու հացը, զգեստը և բոլոր պետքերը պիտի հոգար հողատերը, ինչպես և նա պիտի վճարեր նրա պետական և հասարակական[8] տուրքերը։ Երրորդ պարտականությունը (բանվորական օրերը) պահանջում էր, որ ամեն ծուխ տարվա մեջ հողատիրոջ պահանջմամբ տար մի մշակ՝ անասունի և գյուղատնտեսական գործիքների հետ միասին— աղալարին՝ 8 օր զանազան ժամկետներին, բեկին՝ 18 օր։ Բացի այդ, գյուղացիք պարտական էին գյուղովի, այսինքն՝ էվրէզ[9], երկու օր աշխատել հողատիրոջ համար։ Գյուղացիք պիտի հպատակ և հնազանդ լինեին հողատիրոջը[10], որը միաժամանակ և՛ գյուղացի կառավարիչ էր, և՛ ոստիկանապետ, և՛ նախագահ գյուղական դատարանի, բայց և իր կարողությամբ պատասխանատու էր իր կալվածքի սահմաններում կատարված ավազակության, սպանության, գողության պատճառ հանցագործին չհայտնաբերելու դեպքում, ինչպես և իր իշխանությունն ի չարն գործադրելու դեպքում։

Այսպիսի լիազորություններով օժտված կալվածատերը բնական է, որ հաճախ սանձարձակ շահագործության էր դիմում։ Այդպիսի մի շահագործության դեմ ուղղված ժողովրդական ելույթի մանրամասնությունները պահպանվել են այն վավերագրի մեջ, որոնք օգտագործել է Լեոն իր «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի»[11] աշխատության մեջ՝ նկարագրելով Տեղ գյուղում 1849 թվականին բռնկած բողոքը։ Այդ գյուղի տերը Մոդիլևսկու և Երմոլով 2-րդի 1823 թ. կազմած ցուցակագրությունից մեջ ծանոթ Ասատ-բեկն էր, կապիտան Ռուստամ-բեկի որդին, որը արդեն կրում է Ռուստամբեկով ազգանունը[12]։

Տեղի գյուղացիք բեկական կալվածքների չափն ու սահմանները որոշող մասնաժողովին հայտարարել էին, որ գյուղի հողերը համայնքին են պատկանում և ոչ թե Ասատ-բեկին և որ հողը պիտի գրվի համայնքի վրա։ Որովհետև մասնաժողովը այդ պահանջը չէր ընդունում, իսկ գյուղացիք շարունակում էին կրկնել միևնույն պահանջները, դա Շուշու գավառապետի կողմից համարվեց ապստամբություն իրենց աղայի դեմ և որպես ժողովրդին գրգռող մեղադրվեց քահանաներից մեկը։ Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ Թիֆլիսից ուղարկվեց հատուկ քննիչ, որին գյուղացիության ներկայացրած գրա-

---

8 Земские.

9 Эврез.

10 *Иваненко В. Н.* указ. соч., էջ 359։

11 Թիֆլիս, 1908, էջ 80—83։

12 Ռուսական տիրապետության հաստատման օրից պահանջվեց, որ յուրաքանչյուր անհատ՝ լինի նա արտոնյալ դասակարգին պատկանող, թե պարզ գյուղացի, արհեստավոր և այլն, բացի իր հատուկ անունից և հոր անունից, ինչպես մինչ այդ էր, ունենա կայուն ազգանուն՝ տոհմանուն, որով նա պետք է հիշատակվեր թե ցուցակագրության միջոցին և թե այլ վավերագրերում։ Պաշտոնական գրությունների մեջ ազգանունները վերջանում էին ռուսական ով և եվ վերջավորություններով—Мелик-Парсаданов, Мелик-Сафразбеков, Мелик-Тангиев, Сефиев, Ростамбеков, երբեմն որևէ ածական հավելումով Мелик-Парсаданов—Аджанан-Карханский, իսկ հայերեն եան վերջավորությունով՝ Մ. Փարսադանյան, Մ. Սաֆրազբեկյան, Մ. Թանգյան։